ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

21-ը հուլիսի 2021 թվականի N 70 Ա

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով,

**ավագանին որոշում է՝**

1.Հաստատել 21-ը հուլիսի 2020թ. թիվ 6 հերթական նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

2.Եղեգիս համայնքի ղեկավարի հաղորդումները 2021թ. առաջին կիսամյակի բյուջեի կատարման ընթացքի մասին,

3.Եղեգիս համայնքի 2021 թվականի առաջին կիսամյակի տարեկան աշխատանքային պլանի և իրականացված ծրագրերի վերաբերյալ հաշվետվության հաստատման մասին,

4.<<Զարգացնելով համայնքապետարանների երիտասարդ աշխատակիցների կարողությունները>> ենթադրամաշնորհի համայնքային ներդրման չափ սահմանելու մասին,

5.Եղեգիս համայնքի Հորս բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը վարձակալությամբ տրամադրելու մասին,

6.Եղեգիս համայնքի Գողթանիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.10335հա,0.6հա, 0.618հա, 0.2126հա, 0.05հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողերը աճուրդով օտարելու մասին:

7.Եղեգիս համայնքի գույքագրման ցուցակներում լրացումներ կատարելու մասին:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բադալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Միհիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
22 Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

21-ը հուլիսի 2021 թվականի N 71 Ա

## *ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 83-րդ հոդվածի 2-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

Ընդունել ի գիտություն՝ Եղեգիս համայնքի ղեկավարի հաղորդումները 2021թ. առաջին կիսամյակի բյուջեի կատարման ընթացքի մասին /համաձայն սույն որոշման կից հավելվածի/:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բադալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված
Եղեգիս համայնքի ավագանու
21–ը հուլիսի 2021թ. N 71 Ա որոշման

Եկամտային մաս. հազ.դրամ

| Եկամտատեսակ | Նախատեսված /1-ին կիսամյակ/ | Կատարողական /1-ին կիսամյակ/ | Կատարման տոկոս |
|---|---|---|---|
| Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 4900.0 | 3052.8 | 62 |
| Գույքահարկ | 12650.0 | 8913.16 | 70.5 |
| Տեղական տուրքեր | 475.0 | 429.40 | 90.4 |
| Ընդամենը գույքի վարձակալությունից եկամուտներ | 6400.0 | 8558.37 | 133.7 |
| Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 107599.0 | 107599.0 | 100 |
| Այլ դոտացիաներ | 25748,9 | 25748,9 | 100 |
| Տեղական վճարներ | 5250.0 | 732.62 | 13.8 |
| **Այլեկամուտներ** /Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, Վարչական գանձումներ,օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ/ | 375.0 | 2309.7 | 615 |

| Ծախսային մաս | Նախատեսված /1-ին կիսամյակ / | Կատարողական /1-ին կիսամյակ / | Կատարման տոկոս |
|---|---|---|---|
| Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ | 51000.0 | 49216.648 | 96.5 |
| Պարգևատրումներ | 2000.0 | 186.02 | 10 |
| Էներգետիկ ծառայություններ | 7000.0 | 4529.061 | 64.7 |
| Կոմունալ ծառայություններ | 5100.0 | 4250.0 | 83 |
| Կապի ծառայություններ | 1000.0 | 741.4 | 74.1 |
| Գործողումների և շրջագայությունների ծախսեր | 400.0 | 63.4 | 15.8 |
| Պայմանագրային ծառայությունների ձեռքբերում | 18352.5 | 3258.28 | 17.8 |
| Դրամաշնորհներ | 21255.0 | 0 | 0 |
| Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ | 2750.0 | 1240.0 | 45 |
| Այլ ծախսեր | 5000.0 | 3204.337 | 64 |
| Շենքերի և շինություններ կապիտալ վերանորոգում, շինարարություն | 50521.1775 | 24951.4 | 49.3 |
| Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ | 2180.0 | 1498.0 | 68.7 |
| նյութեր | 7260.0 | 3516.288 | 48.4 |

Համայնքի ղեկավար ........................................................... Արթուր Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

21-ը հուլիսի 2021 թվականի N 72 Ա

*ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով,

***ավագանին որոշում է՝***

Հաստատել 2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Եղեգիս համայնքի տարեկան աշխատանքային պլանի և իրականացված ծրագրերի վերաբերյալ հաշվետվությունը, համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բադալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված
Եղեգիս համայնքի ավագանու
21-ը Հուլիս 2021թ. N 72Ա որոշման

# ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ











## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

Հուլիս

2021թ-ին Եղեգիս համայնքում աշխատանքներն ու ծրագրերն իրականացվել են՝ համաձայն համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրի դրույթներին, 2021թ. տարեկան աշխատանքային պլանի, համայնքի 2021թ. բյուջեի՝ հաշվի առնելով համայնքի առկա ռեսուրսները, առանձնահատկությունները, զարգացման գերակա ուղղությունները, նախապես քարտեզագրված ծրագրային առաջնահերթությունները:

Իրականացված աշխատանքների շնորհիվ գրանցվել են հետևյալ արդյունքները՝ ըստ ոլորտների և ուղղությունների:

## ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Ավարտվել է Հերմոն բնակավայրում ոռոգման խողովակաշարի կառուցման աշխատանքները:

Հաստատվել է և նախատեսվում է փողոցային լուսավորության անցկացում

1. Շատին բնակավայր 2315մ 73 ԼԵԴ լուսատու,
2. Արտաբույնք բնակավայր 1560մ 52 ԼԵԴ լուսատու,
3. Թառաթումբ բնակավայր 1213 մ 36 ԼԵԴ լուսատու:

Հաստատվել է և նախատեսվում է խմելու ջրի խողովակաշարի կառուցում և վերանորոգում,ՕԿՋ-ների վերանորոգում և հիմնանորոգում

- Հորբատեղ 475մ պոլիէթիլենային խողովակ, 25մ պողպատյա խողովակ,
- Գողթանիկ 500մ պոլիէթիլենային խողովակ,
- Թառաթումբ 1000մ պոլիէթիլենային խողովակ,
- Սալլի ՕԿՋ-ի վերանորոգում,
- Եղեգիս 1800մ պոլիէթիլենային խողովակ և ՕԿՋ-ի հիմնանորոգում,
- Շատին 1200մ պոլիէթիլենային խողովակ:

Հաստատվել է և նախատեսվում է ոռոգման խողովակաշարի կառուցում

- Աղնջաձոր բնակավայր 450մ 530մմ ,,50մ 350մմ պողպատյա կիսախողովակ ,
- Քարագլուխ 200մ 530մմ, 125մ 350մմ, 25մ 700մմ պողպատյա կիսախողովակ ,
- Թառաթումբ 100մ 350մմ պողպատյա կիսախողովակ,
- Շատին բնակավայր 305մ 350մմ, 100մ 530մմ, 45մ 100մմ պողպատյա կիսախողովակ,
- Հորս բնակավայր 300մ 530մմ պողպատյա կիսախողովակ,
- Վարդահովիտ բնակավայր 1250մ 273մմ մետաղական խողովակ,
- Սալլի բնակավայր 260մ 325մմ պողպատյա խողովակ:

## ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ՎԻՎԱՍԵԼ-ՄՏՍ-Ի ԿՈՂՄԻՑ

Ավարտվել են Գողթանիկ և Եղեգիս բնակավայրերում փողոցային լուսավորության անցկացման աշխատանքները:

Համայնքային միջոցներով իրականացված ծրագրերը

1. Եղեգիս համայնքի 12 բնակավայրերում իրականացվում են աղբահանության աշխատանքներ:
2. Կատարվել է *Վարդահովիտ* բնակավայրում ոռոգման առվի փորում և մաքրում:
3. Կատարվել է *Շատին* բնակավայրում քարամաքրման, լայնացման և հարթեցման աշխատանքներ, ինչպես նաև հուշարձանի հիմքի փորում և քարերի տեղափոխման աշխատանքներ:
4. Կատարվել է *Թառաթումբ* բնակավայրում ոռոգման խողովակաշարի նորոգման աշխատանքներ:
5. Կատարվել է *Աղնջաձոր* բնակավայրում ճանապարհների քարամաքրման և հարթեցման աշխատանքներ:
6. Կատարվել է *Շատին* բնակավայրի Սողանլու սարում ճանապարհի հարթեցման, լայնացման և փարախի կառուցման աշխատանքներ:
7. Կատարվել է *Քարագլուխ* բնակավայրի ճանապարհի հարթեցման, քարամաքրման և փոսալցման աշխատանքներ:
8. Կատարվել է *Քարագլուխ* բնակավայրում ոռոգման խողովակաշարի նորոգման աշխատանքներ:
9. Կատարվել է *Շատին* բնակավայրում ոռոգման խողովակաշարի նորոգման աշխատանքներ:
10. Կատարվել է *Արտաբույնք* բնակավայրի <<Սուրբ Աղբյուր>> կոչվող սարի ոռոգման մայր առվի 300 մետր երկարությամբ վնասված հենապատերի վերանորոգման աշխատանքներ:
11. Կատարվել է *Արտաբույնք* բնակավայրի "Ցախաց Քար" և "Սև Աղբյուր" կոչվող սարեր տանող ճանապարհների փոսալցման և հարթեցման աշխատանքներ:
12. Կատարվել են *Հորս* բնակավայրի <<Իլանլու>> /ջրամբար տանող ճանապարհ/, <<Ջամանոլան>>, <<Ղարագյոլլար>>, <<Վանք>>, <<Խամլար>>, <<Դաշտի գյող>>, <<Ալալմալըղ>>, <<Կարտոշկայի հող>> կոչվող տարածքների դաշտամիջյան ճանապարհների հարթեցման աշխատանքներ:

Համայնքի ղեկավար Արթուր Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

21-ը հուլիսի 2021 թվականի N 73 Ա

<<ԶԱՐԳԱՑՆԵԼՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ>> ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 6-րդ և 42-րդ կետերի պահանջներով և ,,Սըլուշն ՀԱԲ,, համայնքային զարգացման ՀԿ-ի համագործակցությամբ

***ավագանին որոշում է՝***

1.Ֆրիդրիխ էբերտ հիմնադրամի ֆինանսավորմամբ ,,Զարգացնելով համայնքապետարանների երիտասարդ աշխատակիցների կարողությունները,, ենթադրամաշնորհով ,,Եղեգիս համայնքի երկու խոշոր բնակավայրերում (Արտաբույնք և Շատին) խաղահրապարակների կառուցման նպատակով սահմանել համայնքային ներդրում՝ 200000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բադալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Միխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

21-ը հուլիսի 2021 թվականի N 74 Ա

## *ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՐՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 28-ը հոկտեմբերի 2010 թվականի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N1477-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

***ավագանին որոշում է՝***

1.Եղեգիս համայնքի Հորս բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության ստորև ներկայացված արոտավայր հողատեսքերը երեք տարի ժամկետով վարձակալությամբ օգտագործման տրամադրել ***<<Բեզոար>> Հասարակական կազմակերպությանը***՝

- կադաստրային ծածկագիր՝ 10-031-0123-0021, մակերեսը՝ 19,56361հա,
- կադաստրային ծածկագիր՝ 10-031-0124-0002, մակերեսը՝ 26,64301հա,
- կադաստրային ծածկագիր՝ 10-031-0127-0014, մակերեսը՝ 55,20327հա:

2. Եղեգիս համայնքի Հորս բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության ստորև ներկայացված արոտավայր հողատեսքերը երեք տարի ժամկետով վարձակալությամբ օգտագործման տրամադրել ***<<Բեզոար>> Հասարակական կազմակերպությանը***՝

- կադաստրային ծածկագիր՝ 10-031-0128-0003, մակերեսը՝ 46,1938հա,
- կադաստրային ծածկագիր՝ 10-031-0128-0015, մակերեսը՝ 63,377հա:

3.Արոտավայրերից օգտվելու վճարի չափը սահմանել տվյալ արոտավայրի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:

4.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ կնքել արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու պայմանագրեր:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

21-ը հուլիսի 2021 թվականի N 75 Ա

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՂԹԱՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.10335ՀԱ,0.6ՀԱ, 0.618ՀԱ, 0.2126ՀԱ, 0.05ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Գողթանիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը աճուրդով օտարելու մասին՝

- այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-018-0148-0032, մակերեսը՝ 0,10335հա,
- այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-018-0105-0032, մակերեսը՝ 0,6հա,
- վարելահող, կադաստրային ծածկագիր՝ 10-018-0125-0022, մակերեսը՝ 0,618հա,
- այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-018-0148-0031, մակերեսը՝ 0,2126հա,
- արոտավայր հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-018-0148-0011, մակերեսը՝ 0,05հա:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 150%-ի չափով:
3. Տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

Կողմ՝ 2 Դեմ՝ 3 Ձեռնպահ՝ 1

Բադալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Կողմ՝ 2 Դեմ՝ 3 Ձեռնպահ՝ 1

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ. 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

21-ը հուլիսի 2021 թվականի N 76 Ա

## *ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ղեկավարի 21/07/2021թ. թիվ 181Ա որոշումը, **ավագանին որոշում է՝**

Ստորև ներկայացված գույքը գույքագրել Եղեգիսի համայնքապետարանի գույքային հաշվեկշռում՝

| h/h | Ապրանքի անվանումը | քանակ, հատ | գին, ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| 1 | Խոտ հավաքիչ մամլիչ Տուկան ՊՊՏ-041 /ԱՏԳ ծածկագիր 8433400001/ | 1 | Ընդամենը՝ 17412500 /տասնյոթ միլիոն չորս հարյուր տասներկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ |
| 2 | Տրակտոր՝ ,,Բելառուս-82.1,, Իդենտիֆիկացիոն համար՝ Y4R900Z01L1110071 Շարժիչի համարը՝ 111084 Արտադրման տարեթիվը՝ 2020թ. Շարժիչի հզորությունը՝ 81 ձիաուժ Գույնը՝ Կապույտ Քաշը՝ 3850կգ | 1 | |

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղդյան Նվեր [signature]

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ բացակա

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր բացակա

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ բացակա

Վարդանյան Միխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ